ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 ապրիլի 2014 թվականի N - 52 Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N992-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետի <<ը>> պարբերության, որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011 թվականի հոկտեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի կարգը հաստատելու մասին>> N145-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ պարբերությամբ.

<<ը. չի լրացել թեկնածուի կենսաթոշակային տարիքը>>:

2. Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2014թ. ապրիլի 7
ք. Կապան